ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/5

ք. Երևան «12» «03» 2020թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հրաչյա Եղիազարյան» Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Հրաչյա Եղիազարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է էլեկտրական սարքերի և սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 9000000 (ինը միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

էլեկտրական սարքերի և սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է՝ 6640000 (վեց միլիոն վեց հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ,

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է՝ 6847000 (վեց միլիոն ութ հարյուր քառասունյոթ հազար) ՀՀ դրամ,

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	Հրաչյա Եղիազարյան Ա/Ձ
Ք. Երևան, Արշակունյաց-63	ՀՀ, ք. Երևան, Պ.Սևակի 8/146
Ն աշխատակազմի գործառնական վարչություն	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011175016	Հ/Հ 1930030241252200
ՀՎՀՀ 02204739	ՀՎՀՀ 25408258
ՔԿ ծառայություն	Հրաչյա Եղիազարյան
Ա. Ղազարյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	50531200/501	ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար անհրաժեշտ էլեկտրական սարքերի և սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայությունների ցուցակը՝ գնացուցակը ներկայացվում է կից N1 հավելվածով: Գնման ընթացակարգի մասնակիցները գնային առաջարկը ներկայացնում են գնացուցակի ընդհանուր գնով: Ծառայությունների մատուցման ընթացքում՝ 1) Վերանորոգման ենթակա էլեկտրական սարք-սարքավորումների կառուցվածքի առանձին մասերի ձեռք բերումը և փոխարինումը նորով պետք է իրականացվի Կատարողի կողմից: 2)Վերանորոգման ենթակա էլեկտրական սարք-սարքավորումների անհրաժեշտությամբ պայմանավորված տեղափոխումը պետք է իրականացվի Կատարողի կողմից: 3) Բանվորական ուժը և տրանսպորտային ծախսերը տրամադրվում է Կատարողի կողմից:	ՀՀ դրամ	9000000	1	ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության կենտրոնական մարմին և ՔԿ հիմնարկներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո և մինչև 25.12.2020թ.

Գնացուցակ

Հ/Հ	Գնման ենթակա ծառայությունների և ծառայությունների ընթացքում օգտագործվող նյութերի անվանումները	Առավելագույն միավորի գինը, ՀՀ դրամներով
	Գնման ենթակա ծառայությունների անվանումները	
	1. Սառնարանների վերանորոգման և պահպանման ծառայություն	
1.	Սառնարանի հողանցման կոնտուրի վիճակի ստուգում և անհրաժեշտության դեպքում կարգաբերում	3000
2.	Հովացման կոնդեսատորի մաքրում	4000
3.	Հովացման կոնդեսատորի ստուգում և վերանորոգում	8000
4.	Էլեկտրական կոնդենսատորի փոխարինում	5000
5.	Ֆրիոն գազի քանակի ստուգում և լիցքավորում (1 կգ)	15000
6.	Ֆրիոն գազի հնարավոր արտահոսքի որոնում և դեֆեկտորի վերանորոգում	8000
7.	Կոմպրեսորի աշխատանքի ստուգում և վերանորոգում կամ փոխարինում նորով	15000
8.	Սառնարանների հանգույցների և առանձին դետալների ստուգում և դրանց փոխարինում	5000
9.	Էլեկտրասարքավորումների տեխնիկական վիճակի ստուգում	3000
10.	Ազդանշանային համակարգի և սառնարանի բռնակ-կարգավորիչների ստուգում և անհրաժեշտության դեպքում ամրաձգում	3000
11.	Կոնտակտների ձգվածության ստուգում և կարգավորում	3000
12.	Սառեցնող խցիկում ջերմաստիճանի ստուգում և կարգավորում	4000
13.	Սառնարանի կորպուսի, էլեկտրասնուցման հաղորդալարերի մեկուսիչ շերտի վիճակի և էլեկտրահաղորդման մասերի մեկուսացման դիմադրության ստուգում և կարգավորում	5000
14.	Ֆեն-շարժիչի վերանորոգում կամ փոխարինում նորով	5000
15.	Մեխանիկական ջերմակարգավորիչի փոխարինում	3000
16.	Էլեկտրական ջերմակարգավորիչի փոխարինում	6000
	2. Խոհանոցային էլեկտրական կաթսայի վերանորոգման և պահպանման ծառայություն	
17.	Լույսաազդանշանային հանգույցի վիճակի ստուգում և կարգավորում	4000
18.	Էլեկտրական կաթսայի միացման և անջատման, հզորությունների փոփոխման ստուգում և կարգավորում	4000
19.	Էլեկտրական կաթսայի սանիտարական մաքրում	2000
20.	Էլեկտրասարքավորումների տեխնիկական վիճակի ստուգում և կարգավորում	4000
21.	Էլեկտրական կոնտակտային միացումների ամրաձգում	3000
22.	Էլեկտրական կոնտակտային միացումների փոխում նորով (ներառյալ կոնտակտային միացումները)	5000
23.	Էլեկտրական տաքացուցիչների (ՏԷՀ) փոխարինում նորով	3000

24.	Էլեկտրական կաթսայի կորպուսի, էլեկտրասնուցման հաղորդալարերի մեկուսիչ շերտի վիճակի և էլեկտրահաղորդման մասերի մեկուսացման դիմադրության ստուգում և կարգավորում	5000
25.	Էլեկտրական կաթսայի հողանցման կոնտուրի վիճակի ստուգում և անհրաժեշտության դեպքում կարգաբերում	3000
26.	Շարժական հանգույցների և մեխանիզմների ամրության ստուգում և ամրաձգում	3000
27.	Ջրի արտահոսքի փականի մաքրում կամ փոխարինում նորով	3000
28.	Ջերմակարգավորիչի վերանորոգում կամ փոխարինում նորով	5000
	3. Խոհանոցային էլեկտրական սալօջախի վերանորոգման և պահպանման ծառայություն	
29.	Արտաքին զննումից հետո անհրաժեշտության դեպքում սալիկների սանիտարական մշակում	2000
30.	Սալօջախների վերանորոգում (էլեկտրականՏԷՀ-երի փոխարինում նորով)	4000
31.	Սալօջախների առանձին օջախի վերանորոգում կամ փոխարինում նորով	4000
32.	Էլեկտրական սալօջախի հանգույցների և առանձին դետալների ստուգում և անհրաժեշտության դեպքում դրանց փոխարինում նորոով	4000
33.	Էլեկտրական կաթսայի կորպուսի, էլեկտրասնուցման հաղորդալարերի մեկուսիչ շերտի վիճակի և էլեկտրահաղորդման մասերի մեկուսացման դիմադրության ստուգում և կարգավորում	5000
34.	Էլեկտրահաղորդման կոնտակտային միացումների ստուգում և կարգավորում	3000
35.	Ազդանշանային համակարգի, սալօջախների հզորությունների բռնակ-կարգավորիչների և երեսապատման միացումների ստուգում և անհրաժեշտության դեպքում ամրաձգում	4000
36.	Էլեկտրական սալօջախի հողանցման կոնտուրի վիճակի ստուգում և անհրաժեշտության դեպքում կարգաբերում	3000
37.	Էլեկտրական սալօջախի միացման և անջատման, հզորությունների փոփոխման ստուգում և վերանորոգում	3000
38.	Ջերմամեկուսիչ շերտի ստուգում և կարգավորում	5000
39.	Կարգավորիչ անջատիչների փոխարինում	4000
	4. Օդորակիչների վերանորոգման և պահպանման ծառայություն	
40.	Պրոֆիլակտիկա՝ օդորակիչի ներսի և դրսի բլոկների մաքրում կեղտերից	5000
41.	Օդորակիչի կորպուսի, էլեկտրասնուցման հաղորդալարերի մեկուսիչ շերտի վիճակի և էլեկտրահաղորդման մասերի մեկուսացման դիմադրության ստուգում և կարգավորում	5000
42.	Արտահոսքի վերացում	5000
43.	Խլադոգենտի լիցքավորում (ֆրեոն) (1 կգ)	15000
44.	Ֆիլտրի փոխարինում նորով (ներառյալ ֆիլտրը)	5000
45.	Կոմպրեսորի փոխարինում նորով	15000
46.	Ռեվերսի կլապանի փոխարինում նորով	10000
47.	Ռելեի վերանորոգում կամ փոխարինում նորով	7000

48.	Ֆեն-շարժիչի վերանորոգում կամ փոխարինում նորով	10000
49.	Կառավարման սալիկի վերանորոգում կամ փոխարինում նորով	5000
50.	Էլեկտրահաղորդման կոնտակտային միացումների ստուգում և կարգավորում	3000
51.	Էլեկտրոկոնդեսատորի փոխարինում նորով (ներառյալ էլեկտրոկոնդեսատորը)	8000
52.	Օդորակիչի հանում և տեղադրում (ներառյալ աշտարակը)	30000
53.	Օդորակիչի հանում և տեղադրում (առանց աշտարակի)	15000
54.	Փականների և մանեկների փոխարինում	6000
55.	Պղնձե խողովակների փոխարինում ջերմամեկուսիչով (1 մետր)	2000
56.	Արտաքին բլոկի մետաղական հենարանների տեղադրում	10000
57.	Սվինգ շարժիչի փոխարինում	5000
58.	Անցքերի բացում պատերում (50 մմ)	5000
	5. Լվացքի մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություն	
59.	Սանիտարահիգիենիկ մաքրում (ջրի փողրակների և առանձին դետալների մաքրում)	3000
60.	Էլեկտրահաղորդման կոնտակտային միացումների ստուգում և կարգավորում	3000
61.	Համակարգի առանձին հանգույցների անսարքությունների վերացում	3000
62.	Խափանված դետալների վերանորոգում կամ փոխարինում նորով	4000
63.	Շարժիչի վերանորոգում կամ փոխարինում նորով	10000
64.	Լվացքի մեքենայի կորպուսի, էլեկտրասնուցման հաղորդալարերի մեկուսիչ շերտի վիճակի և էլեկտրահաղորդման մասերի մեկուսացման դիմադրության ստուգում և կարգավորում	5000
65.	Լվացքի մեքենայի հողանցման կոնտուրի վիճակի ստուգում և անհրաժեշտության դեպքում կարգաբերում	3000
66.	Լվացքի մեքենայի կառավարման բլոկի վերանորոգում	10000
67.	Լվացքի մեքենայի ջեռուցման պոմպի վերանորոգում կամ փոխարինում նորով	8000
68.	Լվացքի մեքենայի էլեկտրական տաքացուցիչի փոխարինում նորով (ներառյալ էլ. տաքացուցիչը)	15000
69.	Լվացքի մեքենայի ջերմաստիչանի ցուցիչի (сенсор)փոխարինում նորով (ներառյալ ցուցիչը)	8000
70.	Առանցքակալի փոխարինում	4000
71.	Թմբուկի հավասարակշռում	7000
72.	Խաչուկի փոխարինում	4000
	6. Ջրի պոմպերի վերանորոգման և պահպանման ծառայություն	
73.	Էլեկտրաշարժիչի աշխատանքի ստուգում և վերանորոգում	40000
74.	Էլեկտրաշարժիչի աշխատանքի ստուգում և փոխարինում նորով	12000
75.	Խափանված դետալների վերանորոգում կամ փոխարինում նորով	3000
76.	Սանիտարական մաքրում	3000
77.	Էլեկտրահաղորդման կոնտակտային միացումների ստուգում և կարգավորում	3000

78.	Ջրի պոմպերի հողանցման կոնտուրի վիճակի ստուգում և անհրաժեշտության դեպքում կարգաբերում	3000
79.	Ջրի պոմպերի կորպուսի, էլեկտրասնուցման հաղորդալարերի մեկուսիչ շերտի վիճակի և էլեկտրահաղորդման մասերի մեկուսացման դիմադրության ստուգում և կարգավորում	5000
80.	Առանցքակալի փոխարինում նորով (ներառյալ առանցքակալը)	7000
81.	Միջադիրների փոխարինում նորով (ներառյալ միջադիրները)	6000
	7. Էլեկտրական վահանակների վերանորոգման և պահպանման ծառայություններ	
82.	Դիագնոստիկա	10000
83.	Էլեկտրամագնիսական անջատիչի փոխարինում նորով	3500
84.	Ավտոմատ անջատիչների փոխարինում նորով	3500
85.	Սեղմակների փոխարինում նորով	3000
86.	Էլեկտրական ղեկավարման բլոկների վերանորոգում	25000
87.	Ազդանշանային լամպերի փոխարինում նորով	2000
	8. Դիզելային գեներատորների վերանորոգման և պահպանման ծառայություններ	
88.	Սանիտարահիգիենիկ մաքրում	5000
89.	Էլեկտրական կոնտակտային միացումների փոխում նորով (ներառյալ կոնտակտային միացումները)	5000
90.	Համակարգի առանձին հանգույցների անսարքությունների վերացում	4000
91.	Խափանված դետալների վերանորոգում կամ փոխարինում նորով	4000
92.	Դիզելային գեներատորի էլեկտրասնուցման հաղորդալարերի մեկուսիչ շերտի վիճակի և էլեկտրահաղորդման մասերի մեկուսացման դիմադրության ստուգում և կարգավորում	5000
93.	Դիզելային գեներատորի հողանցման կոնտուրի վիճակի ստուգում և անհրաժեշտության դեպքում կարգաբերում	3000
94.	Դիզելային գեներատորի կառավարման բլոկի վերանորոգում	10000
95.	Էլեկտրական կոնտակտային միացումների ամրաձգում	3000
96.	Էլեկտրասարքավորումների տեխնիկական վիճակի ստուգում և կարգավորում	4000
97.	Դիզելային գեներատորի յուղի ֆիլտրի փոխարինում նորով	5000
98.	Դիզելային վառելիքի ֆիլտրի փոխարինում նորով	5000
99.	Ջրի պոմպի փոխարինում նորով	10000
100.	Դինամոյի փոխարինում նորով	10000
101.	Թողարկիչի փոխարինում նորով	10000
102.	Ռադիատորի փոխարինում նորով	10000
	9. Ջեռուցման և տաք ջրամատակարարման համակարգերի վերանորոգման ծառայություններ	
103.	Դիագնոստիկա	12000
104.	Rendamax 605 ջեռուցման կաթսայի պրոֆիլակտիկ մաքրում	80000
105.	Rendamax 605 ջեռուցման կաթսայի օդամղիչի տեղադրում և կարգավորում	70000

106.	Rendamax 605 ջեռուցման կաթսայի այրիչի կայծ տվող սարքի և իոնիզատրի փոխում	8000
107.	Գազի ֆիլտրի տեղադրում	7000
108.	Արևային ջրատաքացուցիչների վրա կոլբայի հանում և նորի տեղադրում , փորձարկում	7000
109.	Արևային ջրատաքացուցիչի տաք ջրամատակարարման կարգավորիչ կափույրի (MOD V200123000) փոխարինում նորով	40000
110.	Արևային ջրատաքացուցիչում սննդային հակասառեցուցիչ հեղուկի (пропиленгликоль антифриз 99%) խտության ստուգում և անհրաժեշտ քանակի ավելացում (1 կգ)	3000
111.	Իրանական արտադրության կաթսայի չուգունե սեկցիայի(P=23 կվտ հզորության) փոխարինում նորով	45000
112.	Իրանական արտադրության կաթսայի այրիչի օդ-գազ հարաբերակցությունը կարգավորող ավտոմատ կափույրի տեղադրում և փորձարկում	25000
113.	Իրանական արտադրության կաթսայի (350-400կվտ հզորության) այրիչի վերանորոգում և փորձարկում	65000
114.	Գազի ճնշման տվիչի տեղադրում	5000
115.	Ջերմաստիճանի կարգավորիչ տվիչի տեղադրում	5000
116.	Ավտոմատ օդահանիչի տեղադրում	5000
117.	Գնդիկավոր փականի տեղադրում	3000
118.	Կցաշուրթով և բռնակով FAF տիպի փականի տեղադրում	8000
119.	Մագնիսական МПВ ձևափոխիչի (ջրի ֆիլտր) տեղադրում	30000
120.	Մետաղական խողովակների ջերմամեկուսացում (1 մետրը)	2000
121.	Շրջանառու պոմպի տեղադրում	30000
	Ծառայությունների մատուցման ժամանակ անհրաժեշտ պահեստամասերի և օժանդակ նյութերի անվանումները	
	1. Սառնարանների պահեստամասերի և օժանդակ նյութերի անվանումները	
1.	Կոնդենսատոր	5000
2.	Մանրիլային խողովակ (1մետրը)	1000
3.	Կոմպրեսոր հզորությունը՝ 150վտ	41000
4.	Կոմպրեսոր հզորությունը՝ 185վտ	45000
5.	Կոմպրեսոր հզորությունը՝ 350վտ	51000
6.	Կոմպրեսոր հզորությունը՝ 425վտ	78000
7.	Կոմպրեսոր հզորությունը՝ 500վտ	90000
8.	Կոմպրեսոր հզորությունը՝ 650վտ	120000
9.	Գոլորշիատոր (испаритель)	15000
10.	Չորացնող ֆիլտր	2000
11.	Վերադարձնող խողովակ (1մետրը)	2000

12.	TRV (ջերմաստիճանի վերահսկվող ընդլայնման փական)	20000
13.	Ռելե	5000
14.	Ջերմաստիճանի տվիչի անջատիչ	3000
15.	Էլեկտրական մալուխի մուտքի վահանակ	10000
16.	Էլեկտրասնուցող հաղորդալար (1 մետրը)	500
17.	Լուսարձակիչ	2000
18.	Ֆեն շարժիչ	12000
19.	Թմբուկավոր ֆեն շարժիչ	15000
20.	Մեխանիկական ջերմակարգավորիչ	6000
21.	Էլեկտրական ջերմակարգավորիչ (էլիվեր)	20000
	2. Խոհանոցային էլեկտրական կաթսայի պահեստամասերի և օժանդակ նյութերի անվանումները	
22.	Կաթսայի տարա (250լ.)	70000
23.	Էլեկտրական խողովակային տաքացուցիչ (ТЭН) (1 կվտ)	6000
24.	Էլեկտրական խողովակային տաքացուցիչների կափարիչ	1000
25.	Կաթսայում սննդի մակարդակի փական	3000
26.	Կաթսայի կափարիչ	10000
27.	Անվտանգության փական	2000
28.	Անվտանգության փական բարձր ճնշման համար	5000
29.	Տարայի մեջ ջուր լցնելու խողովակ (1մետրը)	500
30.	Էլեկտրական մալուխի մուտքի վահանակ	10000
31.	Արտահոսքի փական	3000
32.	Միացման և անջատման, հզորությունների փոփոխման կարգավորիչ	5000
33.	Լույսաազդանշանային հանգույց	3000
34.	Կառավարման բլոկ	15000
35.	Մանոմետր	5000
36.	Էլեկտրասնուցող հաղորդալար (1 մետրը)	500
37.	Կաթսայի կափարիչի բռնակ	1000
38.	Շոգեկարգավորիչ	30000
39.	Շոգեկարգավորիչ ցուցիչ (датчик)	8000
	3. Խոհանոցային էլեկտրական սալօջախի պահեստամասերի և օժանդակ նյութերի անվանումները	
40.	Էլեկտրական տաքացուցիչ (ТЭН) (1 հատը)	7000
41.	Էլ. սալօջախի կորպուս	60000
42.	Սալօջախ (ներառյալ տենը) (1 հատը)	15000

43.	Կորպուսի վրա սալօջախների տեղադրման կարգավորիչ-հեղյուսներ(болти) (1 հատը)	500
44.	Կորպուսի վրա սալօջախների ամրացման ամրակներ(шпильки) (1 հատը)	500
45.	Ազդանշանային համակարգ	3000
46.	Սալօջախների միացման-անջատման, հզորությունների փոփոխման բռնակ-կարգավորիչներ	1000
47.	Էլեկտրական մալուխի մուտքի վահանակ	10000
48.	Էլեկտրասնուցման հաղորդալարերի կառավարման բլոկ	20000
49.	Ջերմամեկուսիչ շերտ	5000
50.	Էլեկտրասնուցող հաղորդալար (1 մետրը)	500
51.	Կարգավորիչ անջատիչ	6000
	4. Օդորակիչների պահեստամասերի և օժանդակ նյութերի անվանումները	
52.	Կոմպրեսսոր 9000 BTU	47000
53.	Կոմպրեսսոր 12000 BTU	52000
54.	Կոմպրեսսոր 18000 BTU	75000
55.	Ռեվերսի կլապան	8000
56.	Ռելե	5000
57.	Ֆեն-շարժիչ	12000
58.	Կառավարման սալիկ	15000
59.	Առջևի պատյան	5000
60.	Շերտավարագույր	3000
61.	Մեկուսացնող ժապավեն (1 մետրը)	500
62.	Ջրահեռացման խողովակ (1 մետրը)	500
63.	Հեռակառավարման վահանակ	5000
64.	Էլեկտրասնուցման ցուցիչ	3000
65.	Ռեժիմների ցուցիչ	3000
66.	Ջերմաստիճանի ցուցիչ	3000
67.	Ձեռքով միացման/անջատման (վթարային) սեղմակ	2000
68.	Էլեկտրասնուցող հաղորդալար (1 մետրը)	500
69.	Էլեկտրական մալուխի մուտքի վահանակ	10000
70.	Հենակ	5000
71.	Արտաքին բլոկի մետաղական հենարան	8000
72.	Պղնձե խողովակներ ջերմամեկուսիչով (1 մետրը)	6000
73.	Փական (Φ6)	6000
74.	Փական (Φ10)	10000
75.	Փական (Φ12)	12000
76.	Փական (Φ16)	16000

77.	Սվինգ շարժիչ	6000
	5. Լվացքի մեքենաների պահեստամասերի և օժանդակ նյութերի անվանումները	
78.	Զտիչ (ֆիլտր)	3000
79.	Առանցքակալ	5000
80.	Փական	2000
81.	Գոտի (ռեմեն)	5000
82.	Զսպանակ	1000
83.	Խաչուկ	7000
84.	Էլեկտրաշարժիչ	30000
85.	Ջրահեռացման պոմպ	15000
86.	Էլեկտրական կառավարման բլոկ	15000
87.	Բռնակ-կարգավորիչ անհրաժեշտ ծրագիր ընտրելու համար	1000
88.	Ջրի արտահոսքի փողրակ (1 մետրը)	1000
89.	Ջրի մակարդակի որոշման կարգավորիչ	2000
90.	Էլեկտրասնուցող հաղորդալար (1 մետրը)	500
91.	Պտտվող թմբուկ	10000
92.	Ջրահեռացման կանգնակ	5000
93.	Դուռ	8000
94.	Դռան փական	5000
95.	Դռան ծխնի	2000
	6. Ջրի պոմպերի պահեստամասերի և օժանդակ նյութերի անվանումները	
96.	Պոմպի պատյան	20000
97.	Էլեկտրաշարժիչ (0.550 կվտ հզորության)	40000
98.	Էլեկտրաշարժիչ (0.750 կվտ հզորության)	50000
99.	Էլեկտրաշարժիչ (1.5 կվտ հզորության)	70000
100.	Էլեկտրաշարժիչ (3.0 կվտ հզորության)	90000
101.	Էլեկտրաշարժիչ (4.0 կվտ հզորության)	100000
102.	Էլեկտրաշարժիչ (15.0 կվտ հզորության)	180000
103.	Էլեկտրաշարժիչի կափարիչ	3000
104.	Էլեկտրաշարժիչի լիսեռ	3000
105.	Էլեկտրասնուցող հաղորդալար (1 մետրը)	500
106.	Էլեկտրական մալուխի մուտքի վահանակ	10000
107.	Հովացուցիչ	5000
108.	Հովացուցիչի կափարիչ	1000
109.	Աշխատող ակ	3000

110.	Պտտվող ամրակ	3000
111.	Անշարժ ամրակ	3000
112.	Հենակ	5000
113.	Առանցքակալ	7000
114.	Միջադիր	2000
	7. Էլեկտրական վահանակների պահեստամասերի և օժանդակ նյութերի անվանումները	
115.	Էլեկտրամագնիսական անջատիչ 10Ա	6000
116.	Էլեկտրամագնիսական անջատիչ 25Ա	9000
117.	Էլեկտրամագնիսական անջատիչ 50Ա	14000
118.	Էլեկտրամագնիսական անջատիչ 100Ա	20000
119.	Էլեկտրամագնիսական անջատիչ 200Ա	35000
120.	Ավտոմատ անջատիչ 25Ա	2500
121.	Ավտոմատ անջատիչ 32Ա	3500
122.	Ավտոմատ անջատիչ 50Ա	4000
123.	Ավտոմատ անջատիչ 63Ա	5000
124.	Ավտոմատ անջատիչ 100Ա	20000
125.	Ավտոմատ անջատիչ 200Ա	30000
126.	Սեղմակներ	2500
127.	Ազդանշանային լամպեր	500
	8. Դիզելային գեներատորի պահեստամասերի և օժանդակ նյութերի անվանումները	
128.	Էլեկտրական մալուխի մուտքի վահանակ	10000
129.	Էլեկտրասնուցող հաղորդալար (1 մետրը)	500
130.	Էլեկտրասնուցող մալուխ (1 մետրը)	3500
131.	Լույսաազդանշանային հանգույց	5000
132.	Կառավարման բլոկ	15000
133.	Յուղի ֆիլտր	28000
134.	Դիզելային վառելիքի ֆիլտր	25000
135.	Ջրի պոմպ	18000
136.	Դինամո	27000
137.	Թողարկիչ	32000
138.	Ռադիատոր	25000
	9. Ջեռուցման և տաք ջրամատակարարման համակարգերի պահեստամասերի և օժանդակ նյութերի անվանումները	
139.	Rendamax 605 ջեռուցման կաթսայի օդամղիչ (FAN636200)	1200000
140.	Rendamax 605 ջեռուցման կաթսայի այրիչի կայծ տվող սարք և իոնիզատոր	60000

141.	Գազի ֆիլտր	38000
142.	Արևային ջրատաքացուցիչի կոլբա	20000
143.	Արևային ջրատաքացուցիչի տաք ջրամատակարարման կարգավորիչ կափույր (MOD V200123000)	900000
144.	Իրանական արտադրության կաթսայի չուգունե սեկցիա(P=23 կվտ հզորության)	190000
145.	Իրանական արտադրության կաթսայի այրիչի օդ-գազ հարաբերակցությունը կարգավորող ավտոմատ կափույր	210000
146.	Գազի ճնշման տվիչ	20000
147.	Ջերմաստիճանի կարգավորիչ տվիչ	12000
148.	Ավտոմատ օդահանիչ	6000
149.	Գնդիկավոր փական Φ15	3500
150.	Գնդիկավոր փական Φ20	4000
151.	Գնդիկավոր փական Φ25	8000
152.	Գնդիկավոր փական Φ32	10000
153.	Գնդիկավոր փական Φ40	18000
154.	Գնդիկավոր փական Φ57	28000
155.	Կցաշուրթով և բռնակով FAF տիպի փական Φ50	27000
156.	Կցաշուրթով և բռնակով FAF տիպի փական Φ80	40000
157.	Կցաշուրթով և բռնակով FAF տիպի փական Φ100	55000
158.	Մագնիսական ՄՊԲ ձևափոխիչ (ջրի ֆիլտր)	350000
159.	Շրջանառու պոմպ MCR 132 (P=3.5 կվտ հզորության)	320000
Ընդամենը (առավելագույն միավոր գների հանրագումար) ՝ ծառայությունները և ծառայությունների ընթացքում օգտագործվող նյութերը միասին		**6847000**

Ծանուցում՝ Սույն պայմանագրի շրջանակներում՝ էլեկտրական սարքերի և սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայությունների համար պլանավորված առավելագույն գումարը կազմում է 9000000 (ինը միլիոն) ՀՀ դրամ: Վերանորոգման ծառայությունների ժամանակ օգտագործվող բոլոր նյութերն ու ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված:

Քրեակատարողական ծառայության և հիմնարկների հասցեները՝

N	ՔԿ հիմնարկների անվանումը	Գտնվելու վայրը (հասցեն)
1	ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն	ք. Երևան, Արշակունյաց 63
2	ՀՀ ԱՆ «Դատ.- ների հիվանդանոց» ՔԿՀ	ք.Երևան Արշակունյաց 2Ա
3	ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ	ք.Երևան, Նուբարաշենի խճուղի 2
4	ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ	ք.Երևան, Նուբարաշենի խճուղի 7
5	ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ	ք.Երևան, Նալբանդյան 104
6	ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ	Կոտայքի մարզ, ք.Աբովյան 2-րդ արդյունաբերական թաղ, թիվ 30/1
7	ՀՀ ԱՆ «Հրազդան» ՔԿՀ	Կոտայքի մարզ,ք. Հրազդան, Միկրոշրջան 45
8	ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿՀ	Կոտայքի մարզ, ք. Հրազդան
9	ՀՀ ԱՆ «Կոշ» ՔԿՀ	Արագածոտնի մարզ գ. Կոշ
10	ՀՀ ԱՆ «Արթիկ» ՔԿՀ	Շիրակի մարզ Հառիճ համայնք
11	ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ	Լոռու մարզ ք. Վանաձոր, Տավրոսի 20
12	ՀՀ ԱՆ «Գորիս» ՔԿՀ	Սյունիքի մարզ ք.Գորիս, Նարեկացու 5
13	ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ	Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Էջմիածին-Զոբանքարա խճուղի թիվ 23.

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ.-ի դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
Ք. Երևան, Արշակունյաց-63
Ն աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայություն՝
Ա. Ղազարյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Հրաչյա Եղիազարյան Ա/Ձ
ՀՀ, ք. Երևան, Պ.Սևակի 8/146
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930030241252200
ՀՎՀՀ 25408258
Հրաչյա Եղիազարյան՝

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 12 » « 03 » 2020 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/5 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում				
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	Ընդամենը
1	50531200/501	էլեկտրական սարքերի և սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայություններ	-	4500000	9000000	9000000	9000000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
Ք. Երևան, Արշակունյաց-63
Ն աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայության
Ա. Ղազարյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Հրաչյա Եղիազարյան Ա/Ձ
ՀՀ, ք. Երևան, Պ.Սևակի 8/146
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930030241252200
ՀՎՀՀ 25408258
Հրաչյա Եղիազարյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« 12 » « 03 » 2020 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/5 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2020 թ.
Պայմանագրի համարը՝ *ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/5*
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 12 » « 03» 2020 թ. կնքված
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/5 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն